



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶ

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

N 9 Ն

21.12.2012թ.

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՔԱԶՈՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՆԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին

Որոշում է

Հաստատել Նարեկ համայնքի 2013թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ սահմանումները, համաձայն «Տեղական տուրքերի և վճարների» մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներին:

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների / ներառյալ ոչ հիմնական / շինանարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է .

Հիմնական օբյեկտների համար

ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անահատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանցային/ տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակություն ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ:

բ) սույն կետի « ա » ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

1. 201 – ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ:

2. 501 – ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000 դրամ

3. 1001 – ից ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

- զ) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.
- դ) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ.
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիկանացման աշխատանքների / բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շին. թույլտվություն չպահանջող դեպքերի / համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով:
- ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում, կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար՝ 5000 դրամ:
- Սահմանված դրույքաչափերը հաստատված են 0.5 գործակցի կիրառմամբ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է
- ա) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 10000 դրամ:
- բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 10000 դրամ:
5. Համայնքի տարածքում
- ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ:
- բ) Հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների >> վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հարյուրհիսուն հազար /150000/ դրամ:
6. Աճուրդների և մրցույթների մասնակցության վճար սահմանել 1000 դրամ:
7. Համայնքում փաստացի բնակվող յուրաքանչյուր մեկ շնչի համար աղբահանության վճար սահմանել ամսական՝ 100 դրամ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆՂԱՄՆԵՐ՝

Ս.Սարգսյան

Կողմ

Գ.Ամրոյան

Կողմ

Կ.Մովսիսյան

Կողմ

Ղ.Գևորգյան

Կողմ

Ս.Վարդանյան

Կողմ



Ինքնի ՂԵԿԱԿԱՐ՝

/ ստորագրություն /

Գ.ԶԱԿՈՒԲՅԱՆ

/ անուն ազգանուն /